

Թեստավորման առաջադրանքի ձևանմուշ

Հարց. ՀՀ գործող օրենսդրության համաձայն ստորև բերված պայմանագրերից որոնք են ենթակա պարտադիր նոտարական վավերացման:

ա. Պայմանագիր, համաձայն որի «ԱԱԱ» ՍՊ Ընկերությունը վարձակալում է ՀՀ քաղաքացի Բ-ին պատկանող Երազ մականիշի ավտոմեքենան:

բ. Պայմանագիր, համաձայն որի, «ԱԱԱ» ՓԲ Ընկերությունը գրավադրում է «Բանկ» ՓԲ Ընկերությունում իրեն պատկանող ապրանքները (շրջանառության մեջ գտնվող ապրանքի գրավ):

գ. Պայմանագիր, համաձայն որի «ԱԱԱ» ՍՊ Ընկերությունը պարտավորվում է պայմանագրի կնքմանը հաջորդող մեկ տարվա ընթացքում «ԲԲԲ» ԲԲ Ընկերությանը մատակարարել քառասուն միլիոն ՀՀ դրամի հացահատիկ:

դ. Պայմանագիր, համաձայն որի, ՀՀ քաղաքացի Ա-ն գրավադրում է հեռուստացույցը, ընդ որում գնորդը պահանջում է պայմանագրի նոտարական վավերացում:

Սույն հարցին անհրաժեշտ է պատասխանել դ.: Այդպես նշելու դեպքում, թեկնածուն սույն հարցի համար կստանա 1 միավոր: Եթե թեկնածուն չի նշել այս պատասխանը, նշել է որևէ այլ պատասխան, կամ մեկից ավել պատասխաններ, ապա այս հարցի համար նա կստանա 0 միավոր:

Սույն հարցի «դ»-ի պատասխանը պետք է նշել՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 299-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը: Ընդ որում, պատասխանները նշելուց չի պահանջվում հղում կատարել հիմք հանդիսացող իրավական ակտին: